№ 137 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՈՒՆԻՍԻ 27 — 1902 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՈՒՆԻՍԻ 27 № 137

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն չեղուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԹԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԻ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը, Վեց ռուբլի, մէկ ամսվանը—մէկ ռուբլի։ Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլար։ Եւրօպայի բաժանորդները—16 ֆրանկ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շիտակ քննութեան պահանջը...—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լաւ չէք ըմբռնել. Նամակ Կօջորից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լէմանի ափերից. Գիւղի տէրտէրը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրօպական մամլից եւ գրականութիւնից.

ՇԻՏԱԿ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Ամեն անգամ, երբ հասարակութիւնը լսում է, որ այս կամ այն զեղծման առիթով նշանակված է քննութիւն, նա հանգստանում է և միամտվում, հաւատալով, որ քննութիւնը կը պարզէ ամեն ինչ, պաշտպանելով արդարին և դատապարտելով մեղաւորին։ Քննութիւններ վերջին ժամանակներս նշանակում է և հայոց հոգևոր իշխանութիւնը այս կամ այն երէցփոխի հաշուեւութեան, եկեղեցական գործերի, քահանաների վարմունքների վերաբերութեամբ։

Սակայն պէտք է նկատել, որ քննութիւններից շատերը միայն ձևական բնաւորութիւն են ստանում, հնար եղածին չափ ձգձգվում են և յետոյ բոլորովին մոռացութեան են տրվում։ Եւ ինչ որ աւելի ևս սոսկալի է, այդ այն է, որ քննութիւնները յաճախ կատարվում են ոչ ցանկալի լրջութեամբ, շիտակութեամբ և անաչառութեամբ։ Ուստի քննութիւնը ոչ թէ չէ օգնում թիւրիմացութիւնների և կնճռոտ խնդիրների պարզելուն, այլ աւելի ևս խճճում է նրանց, առաջ բերելով նորանոր դժուարութիւններ և դժգոհութիւններ։

Եւ ահա մենք ականատես ենք, թէ ինչպէս վերջին ժամանակների կատարվող քննութիւններից շատերը պահանջում են նորից քննութիւն, նորից վերաստուգութիւն թէ այն հանգամանքների, որոնք տեղի են ունեցել նախկին քննութիւններից առաջ, և թէ այդ քննութիւնները կատարելու ժամանակ։

Ցաւալի երևոյթ է, երբ քննիչները և նրանց կատարած քննութիւնները պէտք է կորցնեն հասարակութեան նրանց վրա ունեցած վստահութիւնը և հասարակութիւնը չը պէտք է հաւատայ նրանց բարեխղճութեան և անաչառութեան։

Միթէ արդարև այնքան հազուագիւտ են շիտակ և անաչառ անձնաւորութիւնները, որ նոյն իսկ անկարելի է դարձեալ քննութիւնները կատարել տալ պատշաճաւոր ճշդապահութեամբ և անկողմնակալութեամբ։

Որքան սթափեցնող տպաւորութիւն է գործում հասարակութեան վրա այս կամ այն զեղծման առիթով նշանակված քննութիւնը, երկպառիկ աւելի ծանր և վհատեցնող է այն, երբ քննութեան վրա վստահութիւն չը կայ և կասկածներ են ծագում քննիչների շիտակութեան վերաբերութեամբ։

Քննութիւններ կատարելը իշխանութեան ամենալուրջ և ամենակարևոր գործողութիւններից մէկն է, նրա հեղինակութեան ամենածանր փորձաքարերից մէկը։ Եւ հոգևոր իշխանութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնէ, որ նրա կատարած քննութիւնները կրեն իրանց վրա շիտակութեան, անաչառութեան կնիք և չը խախտեն այն վստահութիւնը, որ անհրաժեշտ է դէպի քննութիւններ կատարելու գործը։

Դժբաղդաբար, քննութիւն անող պաշտօնեաները յաճախ չեն զգում, թէ ինչ պատասխանատու գործ է յանձնված նրանց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԱՒ ՉԷՔ ԸՄԲՌՆԵԼ

«Արտեմիս» ամսագրի երկրորդ համարում կարդացի Մառիի առաջնորդողը «Զաւակը» վերնագրով, որտեղ հեղինակը, խօսելով ֆեմինիզմի մասին, գտնում է նրա պահանջները ոչ համապատասխան կանանց կոչման։

Նա գրում է իբրեւ թէ ֆեմինիզմի նպատակն է սանձարձակ ազատութիւն, որ կարողանայ «կրքերու գերի, անասնական բնազդներով միայն ապրող մարդկութեան մը գոյութիւն տալ»։

Մթէ «կրքերի գերի, անասնական բնազդներով» ապրող կանայք քիչ կան։ Այդ տեսակ թէ գաղանի եւ թէ բացարձակ կեանք վարող կանանց թիւը երբէք քիչ չէ եղել։ Այդպիսի կեանք վարելու համար նրանց առջեւ ոչինչ արգելք չը կայ, ընդհակառակը, օրէնքը ինքն է այդպիսի կանանց հովանաւորում։ Ուրեմն, ինչ հարկաւորութիւն կայ կռիւ մղել այն բանի համար, որի իրաւունքը իրանց ձեռքն է։ Ֆեմինիզմի պահանջները բոլորովին տարբեր են, նրանք աւելի բարձր եւ աւելի սուրբ են։ Ֆեմինիզմը կռւում է կնոջ եւ իր զաւակի բարոյական եւ իրաւական ազատութեան համար, կռւում է այն ամեն անարդարութիւնների դէմ, որոնք կատարվում են նրանց վերաբերմամբ։ Կնոջ նպատակն է ձեռք բերել հաւասարութիւն տղամարդկանց հետ, որ նա չը լինի այլ եւս սոսկ հաճոյքի առարկայ տղամարդու համար։

Յօդուածի հեղինակը գրում է. «Ենթադրենք դարձեալ պահ մը, որ ֆեմինիզմը կը յաղթանակէ չուտով։ Վնասէ դուրս ուրիշ ինչ օգուտ կայ ադոր մէջ մարդկութեան համար»։

Մեզ յայտնի է, որ Եւրօպայում հարիւրաւոր եւ հազարաւոր կանայք պահպանում են իրանց եւ իրանց ընտանիքի գոյութիւնը զանազան արհեստանոցներում եւ գործարաններում աշխատելով։ Իբրեւ կանայք, նրանք օրէնքի առաջ իրաւունքներից զուրկ են. գործատէրերը ոչ թէ միայն նրանց տղամարդուց պակաս են վարձատրում, այլ եւ շատ անգամ խաբում են։ Այդպիսով գործատէրերը, շահագործելով կանանց մը կանների ոյժը, լցնում են իրանց գրպանները, իսկ կանայք բողոքելու իրաւունք չունեն, որովհետեւ հաց է հարկաւոր, կեանքը չէ սպասում։ Ճնչված, զրկված իրաւունքներից, մինչեւ երբ կինը պէտք է հպատակվի այդպիսի եւ ուրիշ անարդարութիւններին եւ իր մարդկային իրաւունքները ոտնակոխ անել տայ։ Նա ոչ թէ միայն իրաւունք ունի, այլ եւ պարտաւոր է իրան պաշտպանելու համար դիմել ամեն միջոցի, որպէս զի կարողանայ իր անկախութիւնը ձեռք բերել եւ տղամարդկանց իրաւունքներին հաւասար իրաւունքներ ստանալ։

Հասարակութեան մէկ անդամը լինելով, ինչու արդեօք կինը իրաւունք չը պիտի ունենայ զբաղվելու ընտանիքից դուրս նաեւ հասարակական գործերով։ Զէ՞ որ հասարակական կեանքը նոյնքան է վերաբերվում նրան, որքան նրա զաւակին եւ ամուսնուն։ Այդ տեսակ անարդարութեան են տրվում։ Եւ ինչ որ աւելի ևս սոսկալի է, այդ այն է, որ քննութիւնները յաճախ կատարվում են ոչ ցանկալի լրջութեամբ, շիտակութեամբ և անաչառութեամբ։ Ուստի քննութիւնը ոչ թէ չէ օգնում թիւրիմացութիւնների և կնճռոտ խնդիրների պարզելուն, այլ աւելի ևս խճճում է նրանց, առաջ բերելով նորանոր դժուարութիւններ և դժգոհութիւններ։

Եւ ահա մենք ականատես ենք, թէ ինչպէս վերջին ժամանակների կատարվող քննութիւններից շատերը պահանջում են նորից քննութիւն, նորից վերաստուգութիւն թէ այն հանգամանքների, որոնք տեղի են ունեցել նախկին քննութիւններից առաջ, և թէ այդ քննութիւնները կատարելու ժամանակ։

Ցաւալի երևոյթ է, երբ քննիչները և նրանց կատարած քննութիւնները պէտք է կորցնեն հասարակութեան նրանց վրա ունեցած վստահութիւնը և հասարակութիւնը չը պէտք է հաւատայ նրանց բարեխղճութեան և անաչառութեան։

Միթէ արդարև այնքան հազուագիւտ են շիտակ և անաչառ անձնաւորութիւնները, որ նոյն իսկ անկարելի է դարձեալ քննութիւնները կատարել տալ պատշաճաւոր ճշդապահութեամբ և անկողմնակալութեամբ։

Որքան սթափեցնող տպաւորութիւն է գործում հասարակութեան վրա այս կամ այն զեղծման առիթով նշանակված քննութիւնը, երկպառիկ աւելի ծանր և վհատեցնող է այն, երբ քննութեան վրա վստահութիւն չը կայ և կասկածներ են ծագում քննիչների շիտակութեան վերաբերութեամբ։

Քննութիւններ կատարելը իշխանութեան ամենալուրջ և ամենակարևոր գործողութիւններից մէկն է, նրա հեղինակութեան ամենածանր փորձաքարերից մէկը։ Եւ հոգևոր իշխանութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնէ, որ նրա կատարած քննութիւնները կրեն իրանց վրա շիտակութեան, անաչառութեան կնիք և չը խախտեն այն վստահութիւնը, որ անհրաժեշտ է դէպի քննութիւններ կատարելու գործը։

Դժբաղդաբար, քննութիւն անող պաշտօնեաները յաճախ չեն զգում, թէ ինչ պատասխանատու գործ է յանձնված նրանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՄՏՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

II

Մեր անցեալ յօդուածում ոճրագիտական երկու ուղղութիւնների մասին խօսելիս՝ նկատեցինք, որ սոցիօլոգիականը իր լուրջ արտայայտութեամբ—անհատական եւ հասարակական մօմենտների ներդաշնակութեամբ—աւելի լայն է եւ ներկայումս տիրապետող։ Մենք այս տիրապետութեան փայլուն ապացոյցներից մէկը համարում ենք այն, որ նորերս լոյս տեսաւ ոճրագիտական—մարդաբանական ուղղութեան հիմնադիր՝ Լոմբրոզոյի մի նոր աշխատութիւնը—«Ոճրագործութեան պատճառները եւ նրա դէմ մաքառումը», որի մէջ հեղինակը թէեւ ըստ էութեան չեղու�ներ չէ անում իր ընդգծած ուղղութիւնից՝ այնու ամենայնիւ առանձին ուշադրութիւն է դարձնում կլիմայական եւ սոցիալական պայմանների վրա—մի բան, որ մինչեւ այժմ զգալի կերպով բացակայում էր նրա աշխատութիւնների մէջ։ Բացի ոճրագործութեան պատճառներից, ինչպէս գրքի վերնագիրը ցոյց է տալիս, հեղինակը կանգ է առնում եւ ոճրագործութեան դէմ մաքառելու ազդարարական եւ պատժական միջոցների վրա։

Կլիմայական եւ տեղագրական պայմանների ազդեցութիւնը ոճրագործութեան վրա վաղուց նկատված եւ շեշտված մի երեւոյթ է։ Մինչ վերաբերում է յատկապէս կլիմայականին՝ բարեխառնութեան աստիճանի տարբերութեամբ պայմանաւորվում է երբեմն եւ ոճրագործութեան բնաւորութիւնը։ Ոչ միայն այդ. զանազան վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ նոյն իսկ մի եւ նոյն երկրում տարվայ տարբեր եղանակներին ոճրագործութեան քանակը եւ որակը փոխվում է։ Ընդհանրապէս նկատելի է, որ ամառը ոճրագործութիւններ աւելի յաճախ են տեղի ունենում քան թէ, դիցուք, ձմեռը։ Այս երեւոյթը շեշտում է եւ Լոմբրոզոն՝ թէ անհատական եւ թէ համայնական ոճրագործութիւնների նկատմամբ։ Բացի դրանից՝ կլիմայական պայմանների մասին խօսելիս՝ նա այն միտքն է յայտնում թէ՝ ինչպէս տաքութեան, այնպէս էլ ցրտի բարձր աստիճանները մեղմացնող ներգործութիւն են ունենում ոճրագործութեան վրա։

Աշխարհագրական պայմաններին կից՝ Լոմբրոզոն առանձին նշանակութիւն է տալիս ցեղական ծագումին։ Տաքարիւն ցեղերը, անշուշտ, աւելի մեծ հակում ունեն դէպի ոճրագործութիւնը։ Բացի հէնց Եւրօպայի հարաւային ազգերից՝ բաւական է յիշել նաեւ հրէաներին, որոնց շրջանում ոճրագործութիւնը զգալի չափով զարգացած է։—Այս երեւոյթը բացի պատմական-սոցիալական յայտնի պատճառներից, անպայման, կապված է նաեւ հրէական ցեղի ընդհանուր տէմպէրամենտի հետ։

Սակայն Լոմբրոզոն ցեղական խնդիրը աւելի չոչափելի դարձնելու համար՝ մասնաւորացնում է այդ։ Նրա հաւաքած տեղեկութիւնների հիման վրա Իտալիայում գոյութիւն ունեն ամբողջ գիւղեր, որոնք լի են յայտնի ոճրագործների սերունդներով։ Պիոս IV պապը 1557-ին ստիպված էր այս տեսակ վտանգաւոր գիւղերից մէկի՝ Արտենայի՝ բոլոր բնակիչներին ոչնչացնել, որպէս զի «այլ եւս ապաստարան չը դառնայ զանազան չարագործների համար»։

Յայտնի է, որ մենք էլ ունեցել ենք մեր Արշակաւանը՝ բայց ինչպէս երեւում է իտալական «Արշակաւանները» աւելի բնական ծագում ունեն, արուեստական չեն։

Լոմբրոզոն, անկասկած, բնութեան պաշտամունքի երկրպագուներից չէ. բայց իբրեւ լուրջ դիտող սոցիալական պայմանների վրա կանգ առնելիս չեշտում է այն անխուսափելի վնասակար ազդեցութիւնը, որ ունեցել է քաղաքակրթութիւնը ոճրագործութեան զարգացման վրա։ Աւելի ճիշտ կը լինէր, ի հարկէ, եթէ Լոմբրոզոն «քաղաքակրթութեան» (civilisation) փոխարէն գործածէր «կուլտուր» (kultur) բառը։ Այս երկու գաղափարները շատերն են շփոթում. իսկ ոմանք—ինչպէս օրինակ Հէրդէրը—դրանց մէջ հաւասարեա ոչ մի տարբերութիւն չեն գտնում։ Կուլտուրը ընդհանուր առմամբ բնութեան տարրերի եւ ուժերի վրա մարդկանց ձեռք բերած տիրապետութիւնն է. իսկ քաղաքակրթութիւնը՝ մարդկանց, այսպէս ասած, ինքնատիրապետութիւնն է—սեփական կոպիտ բնազդներին յաղթելը, զգացմունքներն ազնուացնելը, կրքերը մեղմացնելը։ Այնպէս որ քաղաքակրթութիւնը՝ այն մտքով, ինչպէս Հումբոլդն էր այդ հասկանում—«աղդերի մարդկայնանալը»—մի ներքին պրոցէս է, իսկ կուլտուրը՝ արտաքին։ Առաջինը մարդկութեան բարձրանալն ու ազնուանանալն է, իսկ երկրորդը այդ նոյն մարդկութեան համար կեանքի պայմանների ստեղծագործութիւնը ու թեթեւութիւնը։

Դառնալով մեր բուն խնդրին՝ պէտք է նկատել, որ կուլտուրական զարգացման ազդեցութիւնը ոճրագործութեան բնաւորութեան եւ տեսակների վերաբերմամբ իսկոյն աչքի է ընկնում, երբ մարդ համեմատում է, դիցուք, քաղաքում եւ գիւղում տեղի ունեցած ոճրագործութիւնները։ Առաջինում կատարված ոճրագործութիւններն ընդհանրապէս «նուրբ» են եւ «խելօք», այն ինչ երկրորդում՝ մեծ մասամբ կոպիտ, տարրերային։ Լոմբրոզոն չեշտելով այս տարբերութիւնը՝ նկատում է թէ՝ քաղաքում տեղի ունեցած ոճրագործութիւնները աւելի խորամանկութեան, կեղծիքի, ծուլութեան եւ սեռական «նրբացրած» կրքերի հետ կապված երեւոյթներ են. մինչդեռ գիւղերում մենք յաճախակի հանդիպում ենք վրէժխնդրութեան, մարդասպանութեան եւ սրանց նման ուրիշ ոճրագործութիւնների։

Լոմբրոզոն կանգ է առնում կուլտուրայի բազմատեսակ արտայայտութիւնների վրա, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստել են եւ նպաստում են ոճրագործութեան ծաւալվելուն։ Ինչ ասել կուզէ, որ այս տեսակէտից նա տնտեսական պայմաններին տալիս է առաջնակարգ նշանակութիւն։ Մեծ արդիւնաբերութեան զարգացման հէնց առաջին քայլերի հետ զուգընթաց է եւ ոճրագործութեան աճումը։ Այնպէս որ նրա ստեղծած խոշոր բարիքը բերեց իր հետ եւ անջնջելի չարիքը—աշխատանքի եւ դրամագլխի անհաւասար բաժանումը, իրաւունքի եւ ոյժի ողբերգական ընդհարումը։

Ուշադրութեան արժանի է սակայն Լոմբրոզոյի այն կարծիքը թէ՝ տնտեսական պայմանների մասին խօսելիս սխալ է ոճրագործութեան պատճառը բացառապէս աղքատութիւնը համարել. անհերքելի իրողութիւն է, որ հարստութիւնը երբեմն նոյնքան, գուցէ եւ աւելի է նպաստում ոճրագործութեան—մանաւանդ այնպիսի հարստութիւն, որ մեծ է, յանկարծակի է ձեռք բերվում՝ առանց փոխանցիկ շրջանների։ Այսպիսի հանգամանքներում ինչպէս դիզելը, այնպէս էլ վատնելը յաճախ մի եւ նոյն արագութեամբ է տեղի ունենում։ Եւ եթէ դիզելիս, հազուագիւտ դէպքում, ոճրագործութիւնը բացակայել է՝

րութիւնների դէմ է, որ կռուում է ֆեմինիզմը։ Նրա պահանջները չատ են, նրանցից մի քանիսը միայն յիշենք։

Հասարակական կարծիքը պէտք է ընդունէ, որ տղամարդկանց եւ կանանց տուած օգուտը հասարակութեան հաւասար է։

Լաւ ամուսին, լաւ մայր, նոյն իսկ անկախ կին պատրաստելու համար հասարակութիւնը պարտաւոր է բանալ կանանց առաջ բոլոր դրպրոցների մուտքը թէ սկզբնական, թէ միջնակարգ եւ թէ բարձրագոյն, ինչպէս բաց են նրանք տղամարդկանց համար։

Իրաւունք տալ կանանց ունենալ այն բոլոր պաշտօնները, որոնց համար նա ձգտում ունի։

Արհեստանոցներում կանանց վարձատրութիւնը հաւասարացնել տղամարդկանց վարձատրութեան։

Քաղաքական օրէնքով հաստատել կնոջ իրաւաբանական անկախութիւնը իր ամուսնուց եւ ապահովել նրա իրաւունքները իր զաւակի վրա։ Նոյնպէս ապահովել նրա մայրական իրաւունքները ամուսնութիւնից դուրս։

Ոչնչացնել կանանց քաղաքական «անընդունակութիւնը»։ Նա չէ կարող անտարբեր եւ օտար մնալ քաղաքական-հասարակական կեանքին, որ նրա համար կարեւոր հարցերից մէկն է։ Իբրեւ հարկ վճարող, նա իրաւունք ունի ձայն տալ այդ հարկերի մասին։ Դատաստանի ենթարկուած լինելով, նա իրաւունք ունի մասնակցել օրէնքներ մշակելուն, հոգալով իր օգուտը ընտանիքի, պետութեան եւ հասարակութեան մէջ։ Վերջապէս, իբրեւ կին եւ մայր՝ մինչեւ նա չը պիտի հետաքրքրվի ուսումնարանների, զօրանոցների եւ արհեստանոցների դրութեամբ, ուր նրա զաւակները պիտի ստանան իրանց ուսումը։

Հարկադրել հասարակական կարծիքը եւ օրէնսդրութիւնը ճանաչել, որ միայն մէկ բարոյականութիւն գոյութիւն ունի երկու սեռի համար։

Ուրեմն, տեսնում ենք, որ ֆեմինիզմի սկզբունքները բոլորովին ուրիշ են, քան ինչ որ «Զաւակի» հեղինակը կարծում է։ Կանայք, կազմելով մարդկութեան կէսը, ուրեմն ունենալով մի եւ նոյն իրաւունքները կեանքի վերաբերմամբ, ինչ իրաւունքներ ունեն տղամարդիկ, պահանջում են մի եւ նոյն ազատութիւնը, որպէս զի հաւասար լինեն տղամարդկանց հետ, կարողանան իբրեւ ընկերներ, բայց ոչ հպատակներ, անցնել կեանքի ասպարէզը նրանց հետ ձեռք ձեռքի տուած։

Իսկ ինչ վերաբերվում է հայ կանանց, ի հարկէ, ֆեմինիզմի պահանջների մի մասը նրանց համար դեռ վաղ է։ Սակայն մենք ամեն միջոց պէտք է գործ դնենք լուսաւորութիւնը եւ ազատութիւնը մտցնելու նաեւ հայ կնոջ

վանելուն յամենայն դէպս դա յարակից է։ Զանազան երկրների ընթացիկ կեանքում այսպիսի օրինակներ բազմաթիւ են։

Ինչ վերաբերում է ոճրագործութեան եւ մտաւոր կամ հոգեկան ֆակտորների մէջ եղած յարաբերութեանը՝ Լոմբրոզոն այս առիթով նոյնպէս հետաքրքիր խորհրդածութիւններ է անում։ Մտաւորապէս կրթված չրջանն էլ ունի իր առանձնայատուկ ոճիրները. այսպէս օրինակ՝ «քաղաքական յանցաւորները» մեծ մասամբ ինտելիգենտ անձնաւորութիւններ են։ Մտաւոր կրթութիւնն ըստինքեան, անշուշտ, նպաստում է ոճրագործութեան նուազելուն. բայց երբեմն էլ—մանաւանդ իր թերի եւ պակասաւոր յատկութեամբ—դառնում է ոճրագործական մի «նուրբ» եւ վտանգաւոր զէնք։ Այս է պատճառը, որ նա ոճրագործներին մտաւոր կրթութիւն տալու մէջ՝ միշտ այնքան էլ բարերար եւ «ուղղիչ» միջոց չէ տեսնում—«յանցաւորներին ուսում տալ այնպէս՝ ինչպէս այդ մեր բանտային դպրոցներումն է տեղի ունենում—նշանակում է նրանց յոռի ունակութիւնների մէջ կատարելագործել եւ նոր զէնք տալ նրանց ձեռքին՝ ընդդէմ հասարակութեան»։ Ամենամեծ ուշադրութիւն, նրա կարծիքով, պէտք է դարձնել նախապատրաստական կրթութեան վրա։ Այս կրթութիւնը պէտք է լինի հիմնաւոր, առողջ եւ բազմակողմանի։ Ֆիզիկական կրթութեան վերաբերմամբ առանձին խնամք պէտք է տանել. մարմնամարզութեամբ եւ ուրիշ վարժութիւններով ու զբօսանքներով պէտք է ամրացնել մարմինը եւ մանաւանդ նեարդերը, որպէս զի հնարաւոր լինի ծուլութեան եւ վաղաժամ զգայականութեան—ոճրագործութեան այս սկզբնական նախապայմանների—առաջն առնել։

Նոյն հետեւողականութեամբ Լոմբրոզոն դէմ է եւ վանական կրթութեան, որովհետեւ կրօնին, իբրեւ, այսպէս ասած, ոճրամարտ մի ոյժի, նա շատ չնչին նշանակութիւն է տալիս։ Ընդհակառակն՝ վիճակագրական հարուստ փաստերով նա ապացուցանում է, որ կրօնը—գոնէ քրիստոնական երկրներում—ուժեղ կերպով նպաստում է ոճրագործութեան զարգացմանն։ Այսպէս է եղել անցեալում. այսպէս է եւ այժմ։ Նա «քահանայական բանակի» կատարած դերը Սիցիլիայում ամենատխուր գոյներով է նկարագրում։ Երբեմն ջերմեռանդ կրօնաւորներից շատերը՝ իբրեւ ոճրագործներ՝ իրանց յանցանքն արդարացնում են նոյն իսկ կրօնական վարդապետութեան սկզբունքներով։ Այս բոլորի հիման վրա նա այն կարծիքն է յայտնում, թէ միայն «նոր, կենդանի կրօններ՝ իրանց ամբակուռ եւ մոլեռանդ բարոյականով՝ ընդունակ են մաքառել ոճրագործութեան դէմ»։

Որ բնածին եւ ժառանգական յատկութիւններին նա առանձին նշանակութիւն է տալիս—սա մենք անցեալ անգամ արդէն չեշտեցինք։

Հասարակական կազմը թունաւորող, նրա կենսունակութեան նիւթը ծծող ամենավտանգաւոր չարիքը սակայն ալկոհոլի գին է։ Սա է ոճրածին բազմագլուխ վիշապը եւ սրա դէմ պէտք է ուղղել կուի ամենաուժեղ զէնքերը։ Ալկոհոլականութիւնից առաջացած ոճիրները բազմատեսակ են—եւ անբարոյականութիւն եւ գողութիւն եւ սպանութիւն եւ այլն։ Ֆրանսիայում բոլոր ոճրագործութիւններից 50 տոկոսը ալկոհոլիզմի հետեւանք է, իսկ Գերմանիայում՝ 41 տոկոս։ Այն ինչ ամերիկական մի քաղաքում, չը նայելով տեղական բանուորական ուժեղ տարրին, երկար ժամանակից ի վեր է, որ ոճրագործութեան հետքն անգամ չէ երեւում, որովհետեւ այնտեղ ալկոհոլի գործածութիւնը բացարձակապէս արգելված է՝ միայն դեղատներում կարելի է գտնել։

Ալկոհոլականութեան դէմ կրկնակի ոյժով պէտք է մաքառել, որովհետեւ նրա վտանգը բացառիկ, անցողական չէ, այլ համատարած եւ ժառանգական։

Լոմբրոզոն իր գրքում չօշափում է, ի միջի այլոց, եւ մի ուրիշ կարեւոր խնդիր. այն է՝ երկու սեռերի դիրքը դէպի ոճրագործութիւնը։ Ընդհանրապէս արական սեռը թէ որակով եւ թէ քանակով ոճրագործութեան մէջ աւելի առաջադէմ է քան թէ իգական սեռը։ Կանացի առաջնակարգ ոճրագործութիւնն է որդեսպանութիւնը։ Եթէ այս սոսկալի յանցանքը չը լինէր, կանայքն իրանց «ոճրագործութեամբ» միանգամայն կարող էին նսեմանալ տղամարդկանց առաջ։ Կանացի միւս ոճրահոգեբանութիւններն են՝ գողութիւն, թունաւորում, հրդեհ ձգել եւ այլն։

Մեր ձեռքի տակ եղած մի ուրիշ աղբիւրից տեղեկանում ենք, որ եւրոպական զանազան երկրներում կանայք հետեւեալ տոկոսներովն են մասնակցում ոճրագործութեան—Ֆրանսիայում՝ 15. Գերմանիայում՝ 18. Աւստրիայում՝ 15. Սպանիայում՝ 11. Շվեդիայում՝ 13. իսկ Նորվէգիայում հազարեա 20 տոկոսից աւելի։

Հետաքրքիր այն է, որ դիցուք Ֆրանսիայում գրագէտ ոճրագործներից՝ տղամարդիկ 12 տոկոսով գերազանցում են կանանց, իսկ անգրագէտները՝ 3 տոկոսով։ Նոյն երեւոյթը տարբեր արտայայտութիւններով նկատելի է նաեւ եւրոպական ուրիշ երկրներում։ Այս յարաբերութեան պատճառը, ի հարկէ, մասամբ այն հանգամանքի մէջ պէտք է փնտռել, որ տղամարդ ոճրագործներն առհասարակ աւելի մեծ թիւ են կազմում։ Սակայն մի իրողութիւն յամենայն դէպս մնում է անհերքելի. այդ այն է, որ տղամարդկանցից կրթված ոճրագործներն անհամեմատ աւելի չատ են։ Մինչդեռ՝ որքան ծանր է եղել կնոջ կատարած յանցանքը՝ այնքան աւելի նուազ է եղել նրա կրթութեան մակերեւոյթը։

Վիճակագրական այս պարզ թուերի եւ անժխտելի փաստերի դէմ ինչ կառարկեն այն հակաֆեմինիստները, որոնց դաւանանքով կանանց բարոյականութեան ամենազօրեղ վահանը տգիտութիւնն է։

Կանանց աւելի նուազ մասնակցութիւնը ոճրագործութեան մէջ ունի անշուշտ իր թէ ներքին եւ թէ արտաքին պատճառներ։ Որոշ չափով ճիշդ է, ի հարկէ, այն կարծիքը թէ՝ կանայք իրանց բնոյթով տրամադիր չեն դէպի ամեն տեսակ ոճրագործութիւն, մանաւանդ դէպի, այսպէս ասած, առնական ոճրագործութիւն՝ ինչպէս բռնութիւն, մարդասպանութիւն եւ այլն։ Մենք վերեւ արդէն առաջ բերինք մի քանի ոճրագործութիւններ, որոնք կանանց չրջանում աւելի յաճախ են տեղի ունենում։ Բայց ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ մի վիճակագրագէտի հաղորդած փաստերով հէնց այն յանցանքները, որոնք աւելի մօտ են կանացի բնութեան—այդ նոյն յանցանքներում տղամարդիկ դարձեալ գերազանցում են կանանց։ Սա արդէն առաջնորդում է մեզ դէպի արտաքին պատճառները։ այդ այն է, որ կանայք համեմատաբար աւելի սահմանափակ կեանք են վարում, դրսի աշխարհի հետ աւելի նուազ շփման մէջ են քան թէ տղամարդիկ։ Բայց, որ գլխաւորն է, ալկոհոլիզմի վտանգաւոր ախտով այնպէս վարակված չեն՝ ինչպէս այս վերջինները։

Վ. Նալբանդեան

ոգու մէջ։ Դա մեր բոլորիս անհրաժեշտ պարտաւորութիւնն է։

Օր. Հ. Զուրաբեան

Թ ը ն ե վ.

ՆԱՄԱԿ ԿՈՉՈՐԻՑ

—

Յունիսի 22-ին

Կոչօր ամարանոցի սեզօնը բացվել է, բայց դեռ չատ ընակարաններ դատարկ են, ինչպէս երեւում է, դատարկ էլ կը մնան, որովհետեւ թանգ են գնահատվում։ Երկու սենեակից բաղկացած ընակարանի համար պահանջվում է 120—200 ռուբլի վարձ երկու ամսվայ համար։

Մի ժամանակ Ռօքֆիի՝ դէպի ս. Դաւիթ սարը չինելիք ֆունիկուլեօրը, որի շարունակութիւնը Կոչօր պէտք է հասնէր, մեծ իրարանցում ձգեց մեր հարուստների մէջ եւ կարճ ժամանակամիջոցում ս. Դաւթի սարահարթը, սպասելիք երկաթուղու անցնող ճանապարհի աջ եւ ձախ կողմերը եւ նոյն իսկ Կոչօրում, չատ նոր տեղեր եւ այն էլ սուղ գներով վաճառվեցին ամառանոցային ընակարանների համար։ Այս հանգամանքից օգուտ քաղեցին եւ իշխ. Օրբէլեանովների ժառանգները եւ իրանց հողի մի կըտորը, Քերօղլու բերդի մօտ, բաժանեցին փոքրիկ հողամասերի եւ վաճառեցին թանգ գնով Կոչօրի ապագայ երկաթուղու յոյսով խրախուսված մարդկանց վրա։ Սակայն Ռօքֆի Թիֆլիսից հեռանալով, ֆունիկուլեօրի ու Կոչօրի սպասված ելեկտրական երկաթուղու կառուցումը մնաց անկատար եւ չատերին վհատեցրեց։

Կոչօրը Թիֆլիսի ամենամօտիկ ամարանոցն է, որի սկիզբը կովկասեան փոխարքայ իշխ. Վորոնցովի ժամանակից է։ Այս բոպէիս կանգուն է այն տունը, ուր նա ընակվել է։ Կոչօրը Թիֆլիսին մօտիկ լինելովը միայն յարմարութիւններ ունի ամառանոց գնացողների համար, մանաւանդ պետական ծառայողների եւ վաճառականների համար, որոնք հնարաւորութիւն կունենան, եթէ ոչ ամեն օր, գոնէ մի քանի անգամ շաբաթվայ ընթացքում, Թիֆլիսի թոզից եւ ճնշող օդից ազատվելու, զովանալու եւ հանգիստ քնելու։

Դիրքը այս ամառանոցի բարձր է. նա շինված է սարալանջի կրծքին Թիֆլիսից 18 վերստ հեռաւորութեան վրա, ունի ընդարձակ հորիզոն եւ մաքուր, նոսր օդ, բայց սակաւ ջուր. ընդամենը երկու փոքրիկ աղբիւրներ կան եւ դրանք էլ չեն բաւականանում, ուստի մեծ մասամբ գործ են ածում ջրհորի ջուր, որ թէեւ փոքր ինչ աղի է, բայց համեղ է եւ անվնասակար։ Սրանից եօթ տարի առաջ տաքտաք խօսում էին մօտիկ սարերի աղբիւրներից ջուր բերել Կոչօրի համար, բայց մինչեւ այժմ ոչինչ չեղաւ եւ հարցը կարծես մոռացվել է։

Դարձնում ենք երիտասարդ քաղաքագլխի առանձին ուշադրութիւնը այս կարեւոր խնդրի վրա, ինչպէս եւ փողոցների սպայատակելու, ջրառուների ու լուսաւորութեան վրա։ Շատ տեղեր ջրառուներ չը կան եւ լապտերներն էլ այնքան հեռու են իրարից, որ անձրեւային եղանակներին եւ մութ գիշերները անհնար է լինում անցնել փողոցով։

Կենսական մթերքները, չնորհիւ քաղաքագլխի, թանգ չեն, մի կամ կէս կոպէկով աւելի էժան Թիֆլիսի սակագնից, բայց պէտք է ամեն ինչ անհամեմատ թարմ, մաքուր եւ նոր է։

Հայոց եկեղեցում դեռ կանոնաւոր ժամերգութիւն չէ սկսվել։ Լսում ենք, որ եկեղեցու պ. երէցփոխը արդէն վարձել է Կարա-Մուրզայի կազմած քառաձայն երգեցիկ խումբը, որը պէտք է երգէ կիրակի օրերը։ Գովելի է այս երիտասարդ մարդու եռանդն ու աշխատանքը՝ եկեղեցու չաները պահպանելու, տարեկան ել եւ մուտքի հաշիւները տալու եւ կալուածքները մաքուր եւ բարեկարգ դրութեան մէջ պահելու վերաբերմամբ։ Մենք ականատես ենք, թէ ինչպէս նա ամբողջ օրերով վարպետների եւ մշակների մօտ կանգնած չինել է տալիս եկեղեցու հարաւային պատը, որ խախտվել էր եւ վտանգ էր սպառնում։ Երանի թէ այդպիսի երէցփոխիներ չատ ունենայինք։

Կալուածատէր

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը կիրակի օր, յունիսի 23-ին, Մեծ-Ղարաքիլիսայից ուղեւորվեց Ալէքսանդրապոլ, որտեղից նա պէտք է գնայ Էջմիածին։ Վեհափառը այցելել էր Սեւանի եւ Հաղարծնի վանքերը։

—

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան եւ որբերի ապահովութեան համար ստացանք Ցարիցինից, Նահապետ Դիլանջեանի միջոցով, 12 ր. 20 կ.։ Նուիրատուներն են՝ Ց. Արզումանեանց, Ս. Ոլուբսիկեանց, եղբայրք Ղազարեանք, Ինքս. Դիլանջեանց, Զաքար. Ցարութիւնեանց, Ոմն, Անյայտ, 1-ական ր.։ Սէյիդ, Հուսէին-օղլի, Կ. Կոստանեանց, եղբայրք Այվազեանք, Խ. Խուդավերդեանց, Ա. Խոջայեանց, Ս. Ոսկանեանց, Գ. Երեսփոխեանց 50-ական կոպ.։ Մ. Կարապետեանց, Ա. Մակարեանց—40 կ.։ Ս. Ամիրխանեանց, Ոմն, Անյայտ, П. Багдановъ—30 կոպ.։ Մ. Օղաղեանց—1 ր.։ Նախկին գումարների հետ մենք ունենք ընդամենը 1,128 ր. 20 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են, որ Շիրակի սարահարթը անձրեւների մեծ կարօտութիւն ունի։ Եթէ շարունակվի ներկայ չորային եղանակը, այն ժամանակ գեղեցիկ բուսած եւ զարգացած արտերը կարող են վտանգվել երաշտութեան պատճառով։ Վերջին օրերը անձրեւներ եկան Փամբակի ձորում եւ մեծապէս օգնեցին արտերին։

—

«Իվէրիա» լրագրի խօսքով, պրոֆէսօր Ն. Մարր եւ մագիստրանտ Ի. Զավախով, որոնք ապրիլի սկզբին գնացել էին Սինայեան վանքը վրացական ձեռագիրներ ուսումնասիրելու համար, գտել են այնտեղ չատ վրացական 5% ձեռագիրներ, որոնց հետ այժմ նրանք ծանոթանում են։

—

Յունիսի 21-ին լրանում է հռչակաւոր մանկավարժ Ֆրէօբէլի մահվան յիսնամեակը։ Պետերբուրգում Ֆրէօբէլեան ընկերութեան ձեռքով հիմնած մանկական պարտէզները կը տանեն այդ օրը ի յիշատակ հանգուցեալի։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են «Ամարանոց եկողների թիւը այս տարի քիչ է։ եկողներն էլ փոչմանել են քաղաքի կեղտոտութիւնը եւ անչարմարութիւնը տեսնելով»։

—

ՂՈՒՐՅԱՑԻՑ մեզ գրում են. «Շուկայում երեւաց նոր ցորենի լաւ տեսակը, որի պուդը հիմա ծախվում է 80 կոպէկով։ Միչկիւրի եւ Հուսարի կողմերում ցորեն չատ կայ, իսկ Դեմիչու կողմերում աւելի սակաւ է։ Գիւղացին հիմա գոհ է իր վիճակով»։

—

ԶԻԱՏՈՒՐԻՑ մեզ գրում են. «Սրանից մի չաբաթ առաջ տեղիս «Союзъ» ընկերութեան անդամ Վլադիմիր Ծերեթելիի որդու՝ Իլիկոյի կինը զոհ գնաց մի անակնկալ արկածի։ Ասում թէ ինչպէս։ Իլիկոյի եղբայրը (դեռ 14—15 տարեկան ուսանող) սենեակում հրացանը ձեռքին՝ բլթակը անզգուշութեամբ խառնած միջոցին հրացանը արձակվում է եւ գնդակը Իլիկոյի կնոջ վիզը ծակելով անցնում է։ Խեղճ զոհը իսկոյն աւանդում է հոգին։ Տեսարանը սրտաճմլիկ եւ չատ յուզիչ էր, ինքը մօտաւորապէս 20—21 տարեկան գեղանի եւ դեռատի մի հարս էր։ Այսօր յանձնվեց հողին։ Իլիկոյի եղբայրը, իր անխոհեմութեան վարմունքից միերկու օր վերջը, ուզեց անձնասպանութիւն գործել, բայց ատրճանակը չարձակվեց եւ այդպիսով ազատվեց. բայց խղճի խայթը այնքան տանջեց, որ վերջի վերջոյ խելագարութեան ենթարկվեց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼԷՄԱՆԻ ԱՓԵՐԻՑ

—

Վէվէ, յունիսի 20-ին

Ուշագրաւ կենտրաստ։

Մինչդեռ այստեղ, չվէյցարական հողի վրա,

երկ տարբեր ցեղեր, միանգամայն տարբեր առանձնայատկութիւններով, ապրում են դարեր ի վեր կատարեալ համերաշխութեամբ, որից մի հոխոժէն ազգայնութիւն,—երկու հապէս մի երկրների մէջ՝ Աւստրիայում ու Գերմանիայում այդ տարբեր ցեղերը կատաղի ատելութեամբ գրոհ են տալիս իրար դէմ—եւ կոիւը վերջ չունի...

Կոիւը վերջ չունի։

Կոնարասը ցայտուն է եւ միանգամայն հրաշագիր։

Ասում են՝ քաղաքական պայմանները հետեւանք են տնտեսական դրութեան։ Սակայն ոչ պակաս ստոյգ է եւ այն, որ տնտեսական դրութիւնն էլ որոշ չափով արդիւնք է քաղաքական պայմանների։ Փոխազդեցութիւնը այստեղ եւս անժխտելի իրողութիւն է։

Եթէ փոքրիկ Շվէյցարիան վայելում է այսօր ներքին անդորրութիւն, եթէ նրա տնտեսական, մասնաւոր ու հոգեկան կեանքը ընթանում է նորմալ եղանակով, առանց խանգարումների ու ցնցումների,—ինչ խօսք, որ դա դաշնակցական (Ֆէդերատիվ) ռէժիմի շնորհիւ է, որ շվէյցարացին իրացրել է մեզնից շատ դարեր առաջ եւ որ ժառանգաբար փոխանցվում է սերունդներին։

Այդ հանգամանքը պարզում է վերոյիշեալ կոնարասը։ Ռէժիմի շնորհիւ է, որ կատակլիզմների սիրահար բռնանական տաքարիւն բնաւորութիւնը ներդաշնակվում է գերմանական պաղ ու հաշուող տեմպերամենտի հետ։ Ռէժիմի շնորհիւ է, որ իրար բացասող դաւանանքները հաշտ ապրում են մէկ հողի վրա, ֆանատիկոս կաթոլիկը, խստաբարոյ կալվինիստը եւ «առանց դաւանանքի» քաղաքացին՝ համախմբվելով կազմում են մի ուշագրաւ ամբողջ, օրգանական մի ամբողջութիւն։ Եւ այդ ամբողջութիւնը—ազգ է։

Շվէյցարիան ամենապերճախօս հերքումն է այն թէորիաների, որոնք ազգայնութեան Conditio sine qua non համարում են ցեղային ադրինակցութիւնը, կամ ընդհանուր լեզուն ու կրօնը։

«Պատմական անցեալը» աւելի է, քան այդ բոլորը միասին։ Կրօնից, ընդհանուր ծագումից աւելի ծանրակշիռ ֆակտորներ են այն կռիւները, որ յայտնի հողի վրա մղել է մի համայնք ընդհանուր թշնամու դէմ, այն ուրախութիւնները, որ նա ունեցել է յաղթանակներից, այն տառապանքները, որ նա կրել է պարտութիւններից, այն երգերը, որ նա հիւսել է յաղթանակների ու պարտութիւնների առիթով...

Այդպէս է կազմակերպվել ազգայնութեան հակացութիւնը։ Այդպէս չէ արդեօք եւ հայերիս մէջ... «Ցեղական արեան» մաքրութեան վրա կարող ենք արդեօք պնդել հայկական հայրենիքում, որը շարունակ թատր է եղել իրար յաջորդող խուժդուժ ցեղերի արշաւանքների։ Որքան տարացեղ զուգաւորումներ են եղել (croisement) դարերի ընթացքում... Ցամենայն դէպս Հայկ ու Արամի արիւնը չէ հոսում այսօրվայ հայի երակների մէջ։

«Արեան մաքրութիւնը» պատրանք է։ Լեզու, կրօն, աշխարհագրական սահմաններ եւ այլն նոյնպէս չունեն ազգայնութեան ծագման պրոցէսում այն կարեւորութիւնը, որ ունի պատմական անցեալը։

Այդ դարաւոր անցեալն է խօսում իւրաքանչիւր մի մեծ շվէյցարական հանդէսում։ Այդ անցեալն է ներշնչում ամեն մի շվէյցարացու՝ այնքան ջերմ ու խանդավառ սէր դէպի հայրենիքը։

«Պատմական անցեալ» կատէգորիայի մէջ մտնում է անուշտ եւ քաղաքական կեանքը, մտնում են ընդհանուր ռազմավարական տրադիցիաները։ Երեւակայեցէք մի բոպէ, որ Շվէյցարիայի գերմանական մասը դաւաճանելով ռազմավարութեան դարաւոր սկզբունքին՝ յանկարծ ինքզինքը գերիշխող հրատարակէր երկրի միւս տարրերի վրա։ Ռէժիմը խախտվելով՝ ազգայնութեան սկզբունքը եւս խախտված կը լինէր եւ երկիրը այդ վայրկեանից կը դառնար տարբեր ցեղերի անհաշտ հակամարտութեան մի ասպարէզ։

Ճիշտ այդ իրողութիւնն է, որ տեղի ունի երկու հարեւան երկիրների մէջ։ Գերմանիայում իշխող տարրը հալածում է լեհերին, էլզասի ֆրանսիացիներին, Շլեզվիգի դանիացիներին։ Պանգերմանիզմի կամ համագերմանական տիրապետութեան տենչն է, որ նիւթում է այդ բոլոր հալածանքները։

Լինում են յետաշրջումներ հասարակական էվոլիւցիայի մէջ։ Այդպիսի մի յետաշրջում պիտի համարել գերմանական կառավարութեան եւ ժողովրդի մեծամասնութեան բռնած դիրքը դէպի հպատակ ազգութիւնները։ Էլզաս-Լոթարինգիայում դիքտատուրայի յոգուածքի ջնջումը քիչ միջիարանք է, համեմատած այն դրակոնական օրէնքներին, որ Վիլհէլմ-Բիւլովեան ռէժիմը սահմանում է լեհերի ու դանիացիների համար։

Կլոֆաչի վերջին ճառը աւստրիական պարլամենտում հարազատ թարգմանն էր այն բուռն ցասման, որ զգաց առաջադէմ մարդկութիւնը պանգերմանիզմի արքայական ներկայացուցչի սանձարձակ յայտնութիւնների դիմաց։

Գերմանացիք երես են տուել նաեւ Աւստրիայում։ Այդտեղ եւս նրանք ուզում են առաջնութիւն վայելել։ Վոլֆերն եւ Շեոներերները քարոզում են շարունակ, որ Աւստրիայի փրկութիւնը պանգերմանիզմի մէջ է եւ յորդորում են ամենավայրագ միջոցների դիմել՝ à tout prix մարսելու ըմբոստ տարրերը։

Բայց պանգերմանիզմը նուազ բախտաւոր է աւստրիական հողի վրա։ այդտեղ նա խորտակվում է սլավոնականութեան ապառաժին զարկվելով։ Չեխերը, լեհերը մեծամասնութիւն են կազմում, եւ առաջադէմ, կուլտուրական մեծամասնութիւն։

Կռիւը տէր է դրութեան։ Կուռզ կողմերից եւ ոչ մէկը զիջանել չէ ուզում։ Սլավոնները շեշտում են իրանց անկապտելի իրաւունքները, իրանց լեզուն եւ ազգայնական միւս ատացուածքները։ իսկ գերմանացիք ոչ սիրտ ունեն, ոչ էլ ըմբռնում այդպիսի պահանջների համար։ Այդ է պատճառը, որ պատգամաւորական ժողովում մշտնջենական քաոս է տիրում։ Այդ է պատճառը, որ Աւստրիան պարլամենտարիզմի պարոդիա է ներկայացնում այսօր։

Հաբսբուրգեան կայսրութիւնը խորապէս հիւանդ է, եւ ժամանակակից մտածող գլուխները անհանգիստ հարցնում են իրար՝ ինչ կը լինի արդեօք զառամեալ կայսրից յետոյ, որ իր ժողովրդականութեան շնորհիւ կարողանում է դեռ որոշ չափով սանձահարել կենտրոնախոյս ձգտումները...

Ego

ԳԻՒՂԻ ՏԷՐՏԷՐԸ

Գիւղին քահանան, որ գեղջուկին ամեն պահանջները լրացնելու կոչուած, անոր բոլոր մտաւորականութեան, բարոյականութեան եւ հոգեւորականութեան խարիսիը պէտք էր ըլլար, այսօր հեռու է բոլորովին ըլլալէ այն պահապան հրեշտակը՝ որուն պիտի փարէին գիւղացի հայրերը՝ իբրեւ իրենց խորհրդատու, իսկ մնացեալները իբրեւ հայր։

Ապականած է այսօր այն մթնոլորտը որ գիւղական քահանայութիւն կը կոչուի։ Բացառութիւնները այնչափ ցանցառ են թուով որ մարդ կը փորձուի բացառութեան սահմանն իսկ չը դնել։

Երբեմն, երբ ժողովուրդը անդիտակ կապրէր, տակաւին իր կեանքը ու կենցաղին պայմաններուն, գիւղացին իր գլխուն վերեւ ունէր Տէր-Հայրը։ Ան էր իր բարոյական նեցուկը։ Ան էր որ կը քաջալերէր զինքը իր ընկերկումներուն մէջ։ Մինչդեռ այսօր ճիշդը հակառակն է որ կը ցուցադրէ այդ դասակարգը։

Իրաւ է թէ այն տեսները զարգացում բացարձակապէս կը պակսեր գիւղին տէրտէրէն. եւ սակայն ան՝ իր վարչական ձեռնհասութեամբ՝ կրնար իր բոլոր ծուխերը առնել իր ափին մէջ ճիշդ այնպէս՝ ինչպէս հազիւ հիմա մեր էն զարգացեալ եկեղեցականներէն մէկ քանին կը յաջողին։ Բարեշրջական զարգացումը հետզհետէ մարդիկը դրաւ անանկ վիճակի մը մէջ՝ որ պահանջկոտութիւնը սկսաւ ծայր տալ այլեւս։ Պէտք էր որ անհատին աչք-բանալուն համեմատութեամբ կղերն ալ բարձրանար այն աստիճանէն, որուն վրայէն չը պիտի կրնար բնաւ գոհացնել ներկայ համայնքը։ Մեր գիւղացին առջինը չէ հիմա։ Եկեղեցիին մէջ սաղմոսներն ու աղօթքները գոց կարդացող՝ թուխակօրէն՝ մեքենական աղօթքներով աւազանին մէջ երախան մկրտող եւ գերեզմանատան մէջ քանի մը «Տէր-Ողորմեա»-յով մեռելը թաղող քահանան բաւական չէ։ Իսկ ժողովուրդին աչքին փոշի ցանելու համար։ Իրական արժանիքն է որ փնտռուելու վրա է ամենուն կողմէ. եւ ասիկա հետզհետէ աւելի սուր հանքամանք մը պիտի առնէ՝ երբ գաղափարներն ու զգացումները, ժամանակի պահանջումներուն համաձայն ալ աւելի ընդարձակին։

Գիւղերը լքուած են բարոյապէս, բայց միթէ քաղաքները վիճակակից չեն։ Այո. անշուշտ։ Սակայն այս անգամ գեղին քահանային նկատմամբ գրել որոշած ըլլալով, չեմ ուզեր քաղաքինը մէջ խառնել՝ տարմար ատենին անոր համար ալ գրել խոստանալով։

Անգէտ, անկարող քահանաներ են ամենքն ալ,—բացառութիւնները մէկդի,—որոնք գիւղերը կը հոգեն։ Բանէ գործէ չը հասկցող, երբեմն բարի, խելօք եւ երբեմն ալ ժողովրդին վստահութիւնն ու միաժտութիւնը չարաչար գործածող տգէտ՝ ալ վարպետ անձեր։ Ու ատոնց առաւելութիւն ու դիւրութիւն տուողը միայն իրենց վրա ունեցած կրօնական սքեմն է եւ ոչ ուրիշ բան։

Մեր գիւղական քահանաները մեծ մասամբ այս կարգի գձուձ անձնականութեանց մարմնացումներն են, որոնք ով գիտէ ինչ միջոցով եւ ինչ պարագայի մէջ յաջողեր են քահանայական աստիճանը կորզել՝ եպիսկոպոսի մը եւ կամ վարդապետի մը մէկ միամիտ կողմէն օգտուելու առիթը գտնելով։

Կրթական գործը երեսի վրա ձգած են ատոնք, վասն զի չեն առած ուսման եւ կրթութեան համը։ Եւ կամ եթէ երբէք վարժատունին հոգ տանիլ կը կեղծեն՝ ան ալ իրենց առաջը խորունկ ծիսող տիրացու վարժապետ մը երբէք չը հեռանալով է։

Վաշխառուներ են ատոնք մեծ մասով, քամող՝ միամիտ ժողովուրդին, բարեպաշտ հաւատացեալին քսակը։ Երբեմն մուրացկանի ձեւին տակ կը շորթեն ատոնք եւ երբեմն ալ ուրիշ միջոցներով։ Իսկապէս հակառակ ուղղութիւն Աւետարանի ոգիին։

Իրենց տգիտութիւնով նախապաշարումներու միջնորդներն են ատոնք։ Փոխանակ մտային զարգացումով եւ լուսաւոր գաղափարներով նախապաշարումները իսպառ վանելու ժողովուրդին մտքէն՝ աւելի կամրացնեն ատոնք նախապաշարումներու հանդէպ ժողովուրդին ունեցած անիմաստ հաւատալիքը։

Դարմանը սակայն։

Մինչեւ հիմա մեր կողմէ ով եւ է լուրջ ջանք չը տեսնուեցաւ տակաւին քահանայական հարցին համար։ Քանի մը անգամ միայն գաղափարներ փոխանակուեցան այս «կրօնքի եւ բարոյականութեան հիւծախտ»-ին համար, մինչդեռ կարժէր, որ շատ մեծ կարեւորութիւն տրուէր անոր՝ գիւղական ուսուցիչներու հարցին հետ։ Երկուքն ալ նոյնչափ կարեւոր եւ նոյնչափ անհրաժեշտ։ Թողուլ որ այս այսպէս շարունակվի։ Ո՛չ, ի հարկէ։

Քանի մը տարի առաջ խօսք մը եղաւ, թէ նոր ձեռնադրուելիք քահանաները անպատճառ Արմաշու դպրեվանքին մէջ որոշեալ կարճ ընթացք մը պիտի աւարտեն՝ իրաւունք ունենալու համար քահանայ ձեռնադրվելու։ Սակայն մեռեալ տառ մնաց ատիկա։ եւ անկէց վերջը, դեռ վերջին օրերս, լրագրութիւնը արձագանք եղաւ մէկէ աւելի անարժան եւ անընտիր ձեռնադրութիւններու։

Այս հիւծախտին առաջը առնելու համար նախ պէտք է այսուհետեւ շատ բծախնդիր եւ պահանջկոտ ըլլալ գիւղերու համար ձեռնադրուելիք քահանաներու նկատմամբ, եւ առաջին հանդիպողին պղծել չը տալ քահանայութեան անունը։

(«Ծաղիկ»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր, յունիսի 25-ին, ժամանեց արիսինիական Նեգուս Մէնէլիքի արտակարգ դեսպան միտրոպոլիտ Աբունա Մատէոս։ Կայարանում նրան դիմաւորեցին Պետերբուրգի թեմի կառավարիչ սրբազան Իննոկէնտի եւ այլ հոգեւորականներ, նոյնպէս եւ քաղաքապետութեան կառավարիչ կամերգէր Ֆրիշ եւ քաղաքագլուխ Լէլեանով։—Այսօր, Կայսր Նիկոլայ Լ-ի ծննդեան օրվայ յիշատակին, Պետրոպաւլովսկի տաճարում հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ։—Այսօր պետերհոֆեան Մեծ պալատում բաղդ ունեցաւ ներկայանալու Թագաւոր Կայսրին հեծելազօրքի եւ արտիլէրիական դպրոցների օֆիցէրները։—Այն հրէաները, որոնք բնակութեան իրաւունք ունեն Կուրլանդիայի նահանգում, կարող են ոգելից խմիչքների առեւտուր անել։

ՎԱՐՇԱՎԱ։ Վարշավայի նահանգապետը կազմակերպեց մի մանտոժողով տեղական գիւղատնտեսական գործիչներից՝ գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքներին վերաբերեալ հարցերը քննելու համար։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Բացվեց ֆարմացէվտների համաժողով։

ՀՌՈՄ։ «Popolo Romano» լրագրի խօսքով, թագաւորը ճանապարհ կընկնի ուրբաթ դիշերը Պրինէտտիի ուղեկցութեամբ եւ ռուսաց սահմանին կը հասնի շաբաթ օր։ Թագաւորը կը ժամանէ կիրակի Պետերհոֆ։

ԼՕՆԴՕՆ։ Առաւօտեան բիւլլէթնի մէջ հաղորդվում է, որ թագաւորի դրութիւնը լաւացաւ այնքան, որքան հնարաւոր էր ցանկալ։

ՆՕՎԳՈՐՈԴ։ Բացվեցին կուրսեր 26 նահանգների երկդասարանեան եկեղեցական-ծիսական դպրոցների ուսուցիչների համար։ Արքեպիսկոպոս Գուրի մաղթանքից առաջ քարոզ խօսեց։ Ներկայ էին նահանգապետը եւ քաղաքագլուխը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի Ուլլոան հարցնում է—արդեօք հինգշաբթի օր Կրանբորն ճշմարիտ կերպով ներկայացրեց կառավարութեան դրութիւնը, ասելով, որ Անգլիայի գործը չէ առաջարկել դաշնագրերի կապելը, եւ որ նա ինքն է տալիս դաշնագրեր, ինչպէս նորերս թողեցին Եպաւնիային դաշնագրի կապելը։ Բալֆուր բացատրում է, որ Կրանբորնի ճառի այդ տեղը, առանձին բերված, կարող է սխալ հասկացվել, բայց պէտք է յիշել, որ պնդում էին, իբր թէ Անգլիան գտնվում է վտանգաւոր առանձնացած դրութեան մէջ եւ ստիպված է անպայման ընդունել ամեն տեսակ առաջարկվող դաշնակցութիւն։ Կրանբորն արդարացի էր, ուղղելով մի այդպիսի հասկացողմունք, բայց կառավարութիւնը ամենեւին մտքումն անգամ չէ անցկացնում, որ Անգլիայի հետ հաւաձայնութիւնը կարող կը լինէր այլ կերպ կայանար, եթէ ոչ ընդհանուր նպատակով եւ կատարեալ հաւասար պայմաններով։

ԲԵՐՆ։ «Revue de Losanne» նկատում է Իտալիայի հետ յարաբերութիւնները վերականգնելու լուրերի առիթով, թէ եղան միջնորդական ջանքեր, որոնք երկու կողմերիցն էլ բարեհաճութեամբ ընդունվեցին։ Ցոյս կայ, որ դեսպանի նշանակումը տեղի կունենայ տարվայ վերջից աւելի վաղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վիկտոր-Իմմանուէլ թագաւորին, դէպի Ռուսաստան ուղեւորութեան ժամանակ, ուղեկցում են արտաքին գործերի մինիստր Պրինէտտի, պալատի մինիստր գեներալ Պոնցիա-Վալիա, օբէր-ցերէմոնիմէյստէր կոմս Ջանոտտի, գեներալ-ադիւտանտ Բրուսատտի եւ կոմս Սալասկո, եւ իտալական «Կարլո-Ալբէրտո» կրէյսէրով կը գայ ծովապետ Միրաբէլլո։

ՄՕՍԿՎԱ։ Այսօր, սլաւօնական ընկերութեան ցանկութեամբ, սերբական եկեղեցում հոգեհանգստեան մաղթանք կատարվեց Մ. Դ. Սկոբելէվի համար։

26 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Զինուորական խորհուրդը որոշեց որդեգիրներ պահելու համար կադէտների կօրպուսներում վճար վերցնել 450 ր. իւրաքանչիւրից տարեկան, բացի Նիկոլաեվսկի կօրպուսից։

ՊԷՆԶԱ։ Յունիսի 23-ին, գրող Զագօսկինի մահվան յիսնամեակի օրը, նրա հայրենիքում, Սամգա գիւղում, տեղի ունեցաւ նրա յիշատակի տօնակատարութիւնը։

ԲՕՐԻՍՕԳԼԷԲՍԿ։ Այստեղ եղած մառախուղից, որ տարածված էր Բորիսօգլէբսկի գաւառի եւ Դոնի շրջանի վրա, վնասվեցին հացաբոյսերը։

ԽԱՐԿՕՎ։ Այսօր, Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի կեանքի համար մաղթանքից յետոյ, տեղի ունեցաւ Խարկովի քարածխային եւ երկաթուղիական բօրսայի բացումը, ներկայութեամբ Խարկովի նահանգապետ իշխան Օբոլէնսկու, տեղական կառավարչական հիմնարկութիւնների, բանկերի, վաճառականութեան ներկայացուցիչների, լեռնարդիւնաբերողների եւ լեռնարդիւնաբերողների համաժողովի խորհրդի անդամների։ Հանդիսաւոր նիստի մէջ կարդացվեցին շնորհաւորական հեռագիրներ երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրից, ֆինանսների մինիստրից, ֆինանսների մինիստրի օգնական Կովալէվսկուց, լեռնային դեպարտամենտի դիրեկտորից եւ այլ կառավարչական եւ հասարակական անձերից եւ հիմնարկութիւններից։ Համաժողովի նախագահ Ավդակով ճառ խօսեց Խարկովում հիմնած լեռնարդիւնաբերական բօրսայի նշանակութեան մասին։ Իշխան Օբոլէնսկու շնորհաւորական ճառից յետոյ նիստը փակվեց եւ բոլոր ներկայ եղողներին նախաճաշ առաջարկվեց, որը կենդանի անցաւ։—Երէկ, յունիսի 24-ին, ընտրողական ժողովում ընտրվեցին. բօրսային մասնաժողովի անդամ Դոլգովո-Սաբուրով, անդամներ—Ավդակով, Վիրգա, Դիտմար, Մանցիարլի, Եակովլէնկո, Ֆէրտնէր եւ կանդիդատներ—Դմիտրի Այլէվսկի, Կոպիլով, Լիխոնին, Պոդգաեցկի, Ֆէնին եւ Էրդէլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հոգեհանգստին, գեներալ-լէյտենանտ Մ. Դ. Սկոբիլէվի մահվան քսանա-

մեակի օրը, Իշխանուհի Բէլօսէլսկայա-Բէլոզէրսկայի տնային եկեղեցում ներկայ էին բոլգարական դիպլոմատիական գործակալ Ստանչով, գործակալութեան պաշտօնեաները եւ բոլգարական օֆիցէրները։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

25 յունիսի

I Խաղար. տոմսերը	465¼	—	»
II » »	354½	—	»
III » »	288½	—	»
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	—	—	»
Բագուի » » »	—	—	»
Թիֆլիսի հող. բանկի 5%	—	—	»
» » » 4½%	—	—	»
Բագուի նաւթ. Ընկ.	430	—	»
Կասպիական Ընկ.	—	—	»
Մանթաշեան եւ Ընկ.	175	—	»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱԶԱՏԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Փօստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Փօստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Փօստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Փօստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Խառն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ԴԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հարդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ս. Առվանցիոսկի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունիմ յայտնելու ի գիտութիւն Թիֆլիսի եւ այլ տեղերի երէցփոխներին, որ ներկայ 1902 թ. ի յուլիսի 1-ից եկեղեցական մոմավաճառութեան կապալը անցնում է իմ ձեռքը։ Մոմը կը վաճառվի նախկին խանութում։ Հին կապալառուի կնիքով մոմերը չեն ընդունվելու եկեղեցիներում մեր կնիքը լինելու է այլ գոյնով։

Կապալառու Գրիգոր Գ. Սալինեանց

1—2

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

ԵՐԿՈՒ ՍԵՆԵԱԿԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ

ԱՄԱՐԱՆՈՑ

Իր կահ կարասիքով

Վարձու է տրվում 100 բուբլիով։ Դիմել՝ Делижанъ Сергѣю Теръ-Погосянцъ.

1—3

РОЯЛОФОНЪ
ИТАЛЬЯНСКАГО ПРОИЗВОДСТВА



Новѣйшій механическій
ИНСТРУМЕНТЪ СЪ РУЧКОЙ
въ видѣ рояля и съ роялными очень мягкими и пріятными звуками.
МОЖНО ИГРАТЬ ОТЪ САМАГО
PIANISSIMO ДО FORTISSIMO
СО ВСѢМИ ОТТѢНКАМИ.
ИСПОЛНЕНІЕ ПІЕСЪ САМОЕ ОТЧЕТЛИВОЕ И КРАСИВОЕ.
РОЯЛОФОНЪ 4 ОКТАВНЫЙ ЦѢНА 180 РУБЛЕЙ.
ПІЕСЫ КЪ НЕМУ ЗА МЕТРЪ 50 КОП.
РОЯЛОФОНЪ 6 ОКТАВНЫЙ ЦѢНА 300 РУБЛЕЙ.
піесы къ нему за метръ 75 коп.
Представитель для Россіи
І. Ф. МЮЛЛЕРЪ
МОСКВА, ПЕТРОВКА.
Списокъ піесъ и подробное описаніе, а также полный иллюстрированный прейсъ-курантъ всѣмъ инструментамъ безплатно.
Никольскій

ՎԻԵՆՆԱ
ԲԺ. Պ. ԱՖՐԻԿԵԱՆ

տալիս է խորհուրդներ և ուղեկցում է հիւանդներին դէպի մասնագէտները եւ պրոֆեսորները։

Հասցէ՝ Dr P. Afrikian, Wien, 8 Dorotheergasse, III stock.

(չ. հ.) 9—60

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաշերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ստանում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինեան փողոց, տ. № 15, բրնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պոպովի եւ Աբրիտակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պոստով։ 97—100

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են՝

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, Վերջալոյսի ձայներ, տպված Գահիրէում, 1901 թ. գ. 1 ր.
ԱԲԵՂԵԱՆ Մ., Հայոց ժողովրդի հաւատը (գերմաներէն), Լայպցիգ, 1899 թ. գ. 1 ր. 20 կ.
» Հայ ժողովրդական առասպելները Մովսէս Խորենացու պատմութեան մէջ (քննադատութիւն եւ ուսուցում), Վաղարշապատ, 1901 թ. գ. 1 ր. 50 կ.
Շ. ԱՐԱԳՎԻՍՊԻՐԵԼԻ, Դժբաղդ Թաթոս, կամ իսկ քաւին այդ միջոցին մոռնում, հառաչում եւ սուլում էր (հոգեբանական էտիւդ), թարգմ. ռուսերէնից Աւետիք Բարսամեանց, Թիֆլիս, 1902 գ. 7 կ.
ՇԻԼԼԷՐ, Աւազակներ, գերմ. բնագրից ամփոփեց Ս. Թառայեանց, Բագու, 1902 թ. գ. 15 կ.
ՇԷՐԵՆՑ Գ., Սրբավայրեր, տեղագրութիւն Վանայ նահանգի եկեղեցեաց, վանօրէից եւ սուրբարանաց, Թիֆլիս, 1902 թ. գ. 40 կ.
ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ Մ., Զգացմունքներ, Շուշի, 1901 թ. գ. 70 կ։
Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (հ.) 1—5

Տպագրվում է եւ մինչեւ յուլիսի վերջը լոյս կը տեսնէ

ԼԷՕ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Մանրամասն կենսագրութիւն, լուսաբանված գրական-պատմական տեսութիւններով.

Երկուհատոր, մօտ 650 երես, բազմաթիւ (25-ից աւելի) պատկերներով (Նազարեանց եւ նրա ժամանակակիցները, „Հիւսիսափայլի“ գլխաւոր աշխատակիցները, Նազարեանցի ֆակսիմիլէն, գերեզմանը, „Հիւսիսափայլի“ խմբագրատունը)։

Մինչեւ տպագրութեան վերջանալը բացվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ։

Բաժանորդագինն է 1 ՐՈՒԲԼԻ, իսկ ճանապարհածախսով 1 ՐՈՒԲԼԻ 35 ԿՕՊԵԿ։

Լոյս տեսնելուց յետոյ գինը կը բարձրացնվի։

Հատորները առանձին չեն ծախվի։ Առաջին հատորը, լոյս տեսնելուց, կուղարկվի բաժանորդներին եւ վաճառքի չի հանվի մինչեւ երկրորդ հատորի լոյս տեսնելը։

Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Բաժանորդագրութիւնը ԹԻՖԼԻՍՈՒՄ ընդունվում է «Մշակի» խմբագրատանը եւ «Գուտենբէրգ» գրավաճառանոցներում։ ԲԱԳԻՈՒՄ առանց ճանապարհածախսի բաժանորդագրութիւն ընդունվում է Սամսոն Յարութիւնեանի գրավաճառանոցում։ Միւս քաղաքներից դիմում են Тифлисъ. Редакція „Мшакъ“.

3—10

Այս տարվայ Սեպտեմբերից բացվում է Օդեսայում

ԱՏԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՑԾ ՄԱՐԿՈՎԻՉ

Դիմել տեղեկութիւնների համար.—Սադովայա փող. № 15-

4—10

ՕԳՈՍՏՈՍԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար երգարանի առաջին հատորը՝ հինգերորդ տպագրութեամբ, բարեփոխված թէ հին, գործածական եւ թէ նոր երգերով եւ բանաստեղծութիւններով։ Նպատակելով գրքի մեծութեանը, իւրաքանչիւր օրինակի գինն է, կանխիկ վճարող բաժանորդների համար, մի բուբլի։ Գրքի երեսը զարդարված կը լինի նկարիչ Վ. Սուրէնեանցի նկարով։ Յանկացողները, յայտնելով իրանց ճիշդ հասցէն, դիմում են ԲԱԳՈՒ, «Սոխակի» հրատարակչին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, Баку.

ԴՈԿՏՕՐ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

այս ամառ եւս ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պեատիգորսկ)։

Пятигорскъ, Вѣрхн. б. д. Султанъ Крымъ-Гирея. 10—10

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ԶԱԽԱՐԲԷԳԵԱՆ

այս ամառ եւս ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պեատիգորսկ)։

8—8

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են հետեւեալ թատրոնական պիէսները՝

ՓԱՌՆԱԿԷՍ, Նիսիա, վոդեվիլ 1 արար. գ. 40 կ.
» «200,000», կատակերգութիւն 1 արար. գ. 30 կ.
» Բանաստեղծ, կատակերգ. 1 արար. գ. 25 կ.
» Գրականական երեկոյ, կատակերգութիւն 1 արարուածով գ. 20 կ.
ՔՈՒՉԱՐԵԱՆ Գր., Մեղապարտ հրէշներ, դրամա 4 գործողութեամբ, գ. 30 կ.
» Մեղապարտ փարիսեցիներ, դրամատիկական անցքեր 5 պատկերով, գ. 20 կ.
ՔԻՇՄԻՇԵԱՆ Ա., Օրիորդ Բերոյեանց, կոմեդիա, գ. 50 կ.
ՄՕԼԻԷՌ, Բռնի ամուսնութիւն, թարգմանութ. Տ. Փափ. գ. 20 կ.
ԼԷՕՖԱՐԴԻԻ, Առ Իտալիան, Ա. Պ. 70 կ.
ՄԱՆԱՒԵԱՆ Տ., Պատուհանին մուրհակը, թատերգ. եօթ արար. գ. 50 կ.
«Պոլիմպէրիաս», կատակ. երկու արար. թարգմ. Յ. Նազարեանցի, գ. 40 կ.
ՊԱՏԿԱՆԵԱՆ Գ., Սանդուխտ, գ. 25 կ.
ՄՕԼԻԷՐ, Ակամայ բժիշկ, կատակերգութիւն 3 արար, գ. 50 կ.
» Ագահը, կատակերգ. 5 արար, գ. 50 կ.
ԴՕԴԷ, Խոչընդոտ, թարգմանութ. Նաւասարդեանի, գ. 50 կ։
ԷՕԺԷՆ ՍԻՒ, Գաղտնիք Պարիզու, թատերգ. 5 արար., թարգմանութիւն Տէտէեանի, գ. 1 ր.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11.

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան

Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՒԿՈՒՄ, Կարամէլ «ԻԻԲԻԼԷՑՆԱՑԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն

Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։

56—100 (հ. կ.)

Дозволено Цензурою, Тифлисъ, 26 Іюня 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская ул.